լուածք ունեցել են։ Ուտին իր յատուկ նախարարն ունէր եւ ոչ մի իշխան իր ձմեռոցը չէր չինել օտարի սեփական հողի վրայ։ Մանաւանդ Ուտիի Խալխալը, Նուխիի արեւմտեան կողմը, Դաղստանին սահմանակից՝ այնքան հեռու է կենդրոնից, որ դժուար թէ Հայոց Թագաւորը երկրի կենդրոնից այնքան հեռանար ձմեռելու համար։ Ուտիքի Խալխալի շրջակայքին չի նկատւում ապարանքների, դղեակների աւերակներ. այն ինչ Փեսունջուրի Խալխալում կան նախապատմական եւ պատմական շրջանի բազմաթիւ կերտուածքներ եւ կառուցուածքներ, որտեղ Թագաւորը իր շքախմբով եւ սրանց ընտանիքով կարողացել է ձմեռել։ Խալխալը Պարթեւ-Պահլաւների որորանը, սեփականութիւնը լինելուն համոզում կազմելուց յետոյ, պէտք է համոզուել, որ Խալխալի շրջակայ, մերձակայ բարեբեր եւ հարուստ երկիրները ամբողջապէս նրանց սեփականութիւնն էր կազմում։ Ուղթիք ու Կիցկա գաւառների մէջ էլ նրանք մեծ կալուածներ ունէին եւ Ճորոխի Աւազանի կապուած էին։

Նոյն իսկ Ագաթ.ի հետագայ պարբերութիւնը աւելի զօրացնում է ենթադրութիւնը. Խոսրովն ու Անակը «զամենայն ժամանակս ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչս սառնամանեացն անցուցանէին» Խալխալում։ Անկասկած Խոսրովը օտար կալուածքում ամբողջ ձմեռը չէր կա-